ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին ներկա էին ավագանու 26 անդամներ:
Բացակա էր՝ Մանուկ Առաքելյանը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանը:
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լուսինե Մաթևոսյանը:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 19-ի թիվ 2 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում 2022 թվականի տեղական տուրքերի և տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին
2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին
3.Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Ախուրյան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների 2022 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7 /

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՆԱ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջարկեց մի քանի փոփոխություն մտցնել առաջարկված դրույքաչափերի մեջ:Մասնավորապես՝ 500 և ավել քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար առաջարկվող քառասունվեց հազար դրամը փոխարինել յոթանասուն հազար դրամով, Ժամը 24:00-ից հետո բաղնիքներին/սաունաներին/ աշխատելու թույլտվության համար երկու հարյուր հազար դրամը՝ երկու հարյուր քսան հազար դրամով, խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամը՝ ութ հարյուր հազար դրամով:Մասնավոր գերեզմանատան կազմակերպման մասով առաջարկվեց կիրառել 0.3 գործակից: Տեղական վճարներից Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի սահմանվեց մեկ հարյուր դրամը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և «Տեղական տուրքերի և տեղական վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում սահմանել 2022 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական տարածքում սահմանել 2022 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8 /

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերի, Ախուրյան համայնքի ավագանու կանոնակարգի 47-րդ,48-րդ և 49-րդ կետերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ստեղծել՝

1) ֆինանսավարկային և տնտեսական հարցերի Հանձնաժողով

2) մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի Հանձնաժողով

3) քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսական հարցերի Հանձնաժողով

4) իրավական հարցերի Հանձնաժողով

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովների անհատական կազմը՝

1) ֆինանսավարկային և տնտեսական հարցերի Հանձնաժողով՝

հանձնաժողովի նախագահ՝ Մաթոսյան Մարտիկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն
տեղակալ՝ Սերգոյան Կարեն «Ախուրյան» խմբակցություն
անդամներ՝ Մնացյան Միեր
Ոսկանյան Հակոբ
Մկրտչյան Գարեգին
Վարդանյան Վարսիկ

2) մշակույթի, կրթության, սպորտի և սոցիալական հարցերի Հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մուշեղյան Նարինե «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն

տեղակալ՝ Գևորգյան Համլետ «Հաղթանակ» խմբակցություն
Սուվարյան Թամարա
Եղիազարյան Շամիրամ
Մկրտչյան Անի
Մանուկյան Ազնիվ

3) քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսական հարցերի Հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հովհաննիսյան Սամսոն «Ախուրյան» խմբակցություն

տեղակալ՝ Մանուկյան Զավեն «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն

անդամներ՝ Ներսիսյան Կարեն
Արշակյան Վասյա
Առաքելյան Մանուկ
Ղազարյան Լադիկ

4) իրավական հարցերի Հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Դրմեյան Արտաշես «Հաղթանակ» խմբակցություն

տեղակալ՝ Նավոյան Հասմիկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն

անդամներ՝ Անտոնյան Ֆրունզե
Հովհաննիսյան Վաչագան
Մաթևոսյան Աշոտ
Էլբայնա Կատյա

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9 /

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների 2022 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ թիվ 1-23 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի փետրվարի 1-ից
3. Առաջարկել համայնքի ղեկավարին 2 ամսվա ընթացքում ֆինանսավարկային և տնտեսական հարցերի և քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսական հարցերի հանձնաժողովների միջոցով ուսումնասիրել և, ուսումնասիրության արդյունքերից ելնելով, իրականացնել «Ախուրյանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» և «Մարմաշեն համայնքի տեխնիկաների սպասարկման կենտրոն» ՀՈԱԿ-ների վերամիավորման գործընթաց:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 28-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Առաջարկել Ախուրյան համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշման N 2 հավելվածի 4-րդ կետն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11/

Ավագանու անդամներ

ԱԼԲԵՐՏ ԱՅՎԱԶՅԱՆ

ՖՐՈՒՆԶԵ ԱՆՏՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ՎԱՍՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԴՐՄԵՅԱՆ

ՇԱՄԻՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿԱՏՅԱ ԷԼԲԱԿՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼԱԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՆԱՎՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱԿՈԲ ՈՍԿԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԵՐԳՈՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՎԱՐՍԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Լուսինե Մաթևոսյանը

_____